

որ նրա ձանապարհը, ազգային դատարարական թիւը դէպի դաւանանք չէր տանում,—այն ժամանակ նշանակում էր ազգային ուսումնարանը վտանգից ազատել: Նա ինքն ըստ ինքեան ծանր խնդիր է: Ի՞նչ իրաւունք ունենէր զաղափարների և համոզումների ընդդիմադրութեանց ժամանակ անուանարկութեան և թշնամական անվայել միջոցների դիմել:

Առ նուազն անպարկեշտութիւն և ստանալութիւն է կատակի բարձրացնել մի մարդ, որ ինքն ըստ ինքեան հասարակաց վարկին, յարգանաց իր բաւամբ արժանացել է որպէս բարի, պատուական, իր խօսքի տէր մարդ, ազգային և հասարակաց գործերում որպէս առատաձեւեւներից մինը, որպէս զործող առաւել համոզմամբ, բան թէ ի ցոյցս մարդկան կամ իմացութեամբ: Ի՞նչ անենք, որ նրա խօսքը փոքր ինչ կոպտ է և դժուարաւոր: Բայց սա արդեօք ճշմարիտ և հաստատ համոզման տէր մարդկերի յատկանիշը չէ:

Ի՞նչ բան ունենք այդ կոպտ ու կոշտ արտայայտութեան հետ կամ նրա չէ՞ք-երի հետ, որ նրա լեզուն սովորել է: Յարգել հակառակորդին մեր պարտքն է, մանաւանդ մի հակառակորդին, որ կեանքի մէջ ազնուաբար ապրում է:

Յաճեցէ՛ք պ. խմբագիր, ներկայ նամակիս ձեր պատուական լրագրի էջերի մէջ տեղ տալու, որպէս վճար արդարութեան և իրաւաստութեան դէպի մի պատկառելի անձը, որին թէ՛ն հակառակորդ կամ զաղափարներով և համոզումներով, բայց նորա անհատական նախանձելի յատկութիւնները միշտ յարդել են:

Բժ. Մ. Արամեանց

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 10 օգոստոսի

Ամենքիս յայտնի է, որ մենք, Թիֆլիսի հայերս ունենք չորս փոքր ի շատ բարեկարգ օրիորդաց ուսումնարաններ, մանաւանդ չորսից երկուսը սուրբ Երմիանեան և Յովնանեան ուսումնարանները: Երկու սուրբ Մարիամեան ուսումնարանների վրա կարող եմ ասել հետեւեալը: Նրանց կառավարութեան ղեկը լինելով այս կամ այն տեսչի ձեռքում, կառավարվում է տեսչի քմաց համաձայն: Այժմ առաջ ունեցէ՛ք սուրբ Մարիամեան ուսումնարանը (Նորաշէնի). այդտեղ ոչ կարգ կայ ուսումնարանում և ոչ էլ կանոն, ոչ յառաջդրութիւն աշակերտութեանց կողմից և ոչ էլ ուսուցչաց:

Մէկ ուսումնարան ինչ կարգ ու կանոն պէտք է սենեայ, երբ երկու տարի շարունակ ժողով չէ գումարվում: Թողնենք այս բաները և անցնենք Գայանեան ուսումնարանը, որից իրաւունք ունենք շատ բան սպասելու: Ճշմարիտ է, ուսումնարանը բարեկարգ է, ուսուցչաց խումբը վատ չէ: Բայց աշակերտութեանց առաջադիմութիւնը մի քանի աստիճան ցածր է: Գաւերը նոցանից չեն պահանջում այնպէս ինչպէս հարկն է: Ամեն բանի վրա թեթեւ աչքով են նայում աշակերտութեանը: Ընթերցասիրութիւն չը կայ մէջից: Երբորդ, չորրորդ և մինչև անգամ հինգերորդ դասատան աշակերտութիւնը անգամ կանոնաւոր հայերէն խօսել չեն իմանում. երբորդ չորրորդ դասատուն տեղափոխվող աշակերտութեանից մէկը եթէ վերցնի հայերէն մի մանկական դիրք և եթէ կարգայ, չէ կարող նորա բովանդակութիւնը կանոնաւոր կերպով պատմել (ևս ինքս անձամբ այս ստուգել եմ): Բարձր դասատան աշակերտութիւն ղեւ. ևս հաւատում է նախապաշարմունքներին: Նա նստած «Փայ» բացանդի մօտ, բաց է անել տալիս իր ապրանք և բաղդը: Կարկուտ զաւուր ժամանակ երեսը խաչահնքում է: Հիւանդ ժամանակ պատու կանանց կանչում է աղօթել տալու համար: Տանը նա գիրք չէ կարդում, այլ պարսպ անցէկացնում իր հասակակիցների հետ: Այս բոլոր բաները ծնողները տեսնում են և ոչինչ չեն ասում:

Նա գիշերները իր ծնողների հետ գնում է թաւ. րօն, կ'ընէ և զանազան զբօսատեղիներ: Առաւօտեան ժամի ութին նա գնում է ուսումնարան կողմ, անուշահոտ խնդրով օծված, զանգեր անպատրաստ և լսում է դասերը: Այս բոլոր բաների պատճառը ծնողներն են և ոչ թէ ուսուցիչները. ծնողները այս բաները կարող են արգելել իրանց զաւակներին: Ուսումնարանում աղէկը չու է. տանն է փչանում: Տանը նրա վրա հսկող չը կայ: Ուսուցիչը պարտական է հսկելու ուսումնարանում, ծնողները չեն հոգում նրա վրա,

ընդունակութիւն չունեն նրան որ և է ուղղութիւն տալ, առիթ են տալիս ծուլանալու և աշակերտութիւն միայն զարդերի ու պաճաճանքների հետեւից է ընկնում: Ծնողները նորա հետ տանը հայերէն լեզուով չեն խօսում: Միթէ այսպիսի աշակերտութիւն կարող է հայերէն սովորել: Ծնողները չեն մտածում, որ իրանց որդւոց եթէ ուղարկում են հայոց ուսումնարանները, միայն նորա համար, որ մայրենի լեզու սովորեն: Աշակերտութիւն զարդում լըցնում է իր զուգը հայերէն բառերով, իսկ տանը, չնորհիւ իր ծնողների, սովորած բառերը օդն են ցնդում: Երբ պէտք է այս բաները ծնողները հասկանան, մեր ծնողները գտնէ խնային իրանց որդւոց աշխատանքը, այդ աշխատանքը ի չարը չը գործ դնեն:

Շ. Մ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի հայ-աւետարանական երիտասարդ, Նիկոլայ Ղուկիանց, գրում է մեզ ՇԱՄԱԽԻՅ հետեւեալը: «Մեր յայտնի ազգային բանաստեղծ հանգուցեալ Պետրոս Բէկ Տէր-Յովսէփեան Մարգարեանցի (Մէ-յաղի) կինը, Ոսկի Մարգարեանց խնդրում է ինձ յայտնել լրագրի միջոցով որ իր հանգուցեալ ա-մուսնու Կ. Պօլսում մեռնելուց յետոյ, երբ ինքն տիկինը դառնում էր իր հայրենիքը Շամախի, նա Թիֆլիսում պատահեց մի պարոնի, այն է Գար-րիէլ Խվանիշ Նախաբանցին (երեկ Մէլքոն-մանց) որ յայտնելով իրան որպէս ամենամօտ ծանօթ հանգուցեալ բանաստեղծի, ընդունել է տիկնոջը իր տանը, որպէս ժամանակաւոր հիւ-րին: Պարոնը տեղեկանալով տիկնոջից որ հան-գուցեալի բանաստեղծութիւնների ժողովածուն, ցնչուցալից արդէն թող տրված, տիկնոջ ձեռ-քումն է, համոզել է նրան որ տայ իրան այդ բա-նաստեղծութիւնները հրատարակելու համար: Տի-կին Մարգարեանց, ճշմարիտ, տուեց այդ բանաս-տեղծութիւնները պ. Նախաբանցին (Մէլքոն-մանցին) բայց մինչև այժմ պարոնը չէ հրատա-րակել նրանց, չը դիտենք ինչ պատճառով: Վա-նորդ խնդրում ենք պարոնին, Մէյաղի բանաս-տեղծութիւնների այդ ժողովածուն, որ նրա ձեռ-քումն է, յետ դարձնէ կամ տիկին Ոսկի Մա-րգարեանցին, որ Շամախումն է կենում, կամ յանձնէ «Մշակի» խմբագրին: Ազնութիւն է պահանջում որ պարոնը այլ ևս չը պահէ իր մօտ տիկնոջից վերցրած այդ բանաստեղծութիւ-նները:» Այդ տողերի դրող հայ-աւետարանական երիտասարդը իր նամակի վերջում յայտնում է որ նա, Նիկոլայ Յովսէփեանի Ղուկիանց, ա-մուսնում բարեկամ և ժառանգ է մեր ազգային բանաստեղծ Մէյաղի:

Հայոց Բարեգործական ընկերութեան խորհուր-դը խնդրում է մեզ յայտնել որ օգոստոսի 29-ին կ'երևի օր, առաւօտեան ժամը 11-ին, գումար-վելու է Արծրունու թատրոնում ընկերութեան ընդհանուր ժողովը «Ապաստարանի» խնդրի վերջ-նական լուծման համար:

Շնորհակալութեամբ ստացանք դուրսի Անդ-րէաս Արծրունու նոր ուսումնական աշխատանքը, որ նա կատարել է իտալացի յայտնի միներալոգ պ. Կոստայի հետ միասին: Մեծադիր բրօշուր, որ հրատարակված է Հռօմի մէջ, գրված է իտալե-րէն լեզուով և կրում է հետեւեալ վերնագիրը. «Sulla tormalina cromica e sui depositi di ferro cromato degli Urali, memoria di A. Cossa e A. Arzruni»:

Ստացանք ՕՒԷՍՍԱՅԻՑ պ. Պետրոս Խիթարեա-նից 8 րուր բաժանորդագրին վիեննայի «L'Orien- tal» լրագրի համար: Նախընթաց փողի հետ կա-նի 36 րուրը:

Երէկ, երկուշաբթի օր, Թիֆլիսի Թամաշևիկի ճարտարաբանական մի սարսափելի դրամա կատար-վեցաւ: Յերկուր, ամբողջ հասարակութեան առջև մի վրացի վաճառական Շաթիրով ատրճանակից սպանեց իր կրտսեր եղբորը: Այդ սպանութեան չարժաւորութիւնը յայտնի չեն:

Ուսուցչական ժողովի օգոստոսի 21-ի նիստի ժամանակ հետեւեալ հետաքրքիր է պիղօգ տեղի ունեցաւ: Երբ հարց յարուցվեցաւ օրինակելի դա-սեր կարգաւոր մասին, ատենապետ պ. Չիգինեանց յանկարծ վերակացաւ և յայտնեց որ կարգ. յանձ-նաժողովը չը կարողացաւ Թիֆլիսի ուսուցիչների

մէջ գտնել յարմար անձինք ժողովի առջև օրինա-կելի դասեր մանուկներին կարգաւոր համար: Ու-րեմն Թիֆլիսի բոլոր ծխական ու միջնակարգ դպրոցներում չը գտնվեցան մի 3 կամ 4 հմուտ և փորձառու ուսուցիչներ, որոնք կարողանային օրինակելի դասեր կարգաւ: Այդ տեսակ խայտա-ռակ կարծիք Թիֆլիսի ուսուցիչների վերաբերու-թեամբ և այդ տեսակ կեռ յանդիմանութիւն թեմական տեսչին, հանգստութեամբ տարաւ նա-խագահը, որ ինքն թեմական տեսուչ է: Այդ բնական չէ, երբ դրանից յետոյ առաջարկվեցաւ ընտրութիւն անել ուսուցիչների մէջ, օրինակելի դպրոց կազմելու համար, պ. Մանդինեան, որ ա-ռաջ հրաժարվում էր այդ գործից, պատճառելով ժամանակի պակասութիւնը, յանկարծ յայտնեց որ ինքն յանձն է առնում օրինակելի դպրոց կազ-մել: Ժողովը փոխանակ վերաւորվելու որ պ. Մանդինեանը իրան աւելի բարձր է դասում քան թէ ամբողջ ժողովը ընտրութեան իրաւունքը, ծախսարարութիւններով ընդունեց պ. Մանդինեանի առաջարկութիւնը:

Ուսուցչական ժողովի օգոստոսի 21-ի նիս-տի մէջ պ. Երեյեան առաջարկեց ժողովի անդամ-ներին պ. Երմանովի մօտ խմբագրական հանելու: Այդ բանի համար էլ անդամներից իւրաքանչիւրը պէտք է 1 ր. 50 կօպ. վճարի իր գրականից:

Օգոստոսի 21-ին, շաբաթ օրը, առաւօտեան ժամը 8-ին Ս. Գայանեանի դպրոցի դահլիճում կազմեալ ուսուցիչների առաջին նիստը: Երկուս էին համարեա բոլոր ուսուցիչները Նախագահ պ. Բարեկարգի հարց յայտնեց ժողովին, որ ներ-կայ նիստում զիւստը պարագայումը պէտք է լինի մի մասնախմբի ընտրութիւնը, 35 հոգուց բաղկացած. այդ մասնախումբին յանձն-վում է կազմել ծխական և միջնակարգ դպրոցի ուսուցիչները: Երբ քննարկեցին և ներկայացնել ի թըն-նութիւն և հաստատութիւն ընդհանուր ժողովի: Այդ մասնախումբը իր կողմից կը բաժանվի ըստ յարմարութեան վեց առանձին բաժինների, իւրաքանչիւր բաժինը այսպիսով կը պատրաստէ մի մի ծրագիր այս և այն առարկայի: Բացի սրանից պ. Նախագահը յայտարարեց, որ կարգ. յանձնա-ժողովը իր կողմից հոգացել է կանխիկ պատրաս-տելու մի ծրագիր ծխական և միջնակարգ դպրոց-ների, որ և առաջարկում է այդ մասնախմբին, որպէս գործին նպաստող և օժանդակող մի աշ-խատութիւն: Այդտեղ յարուցվեցաւ մի հարց՝ թէ արդեօք ընդհանուր ուսուցչական ժողովի կազմած ծրագիրը նշանակութիւն կունենայ և կը հաս-տատովի, քանի որ ճանաչողական վարչութիւնը վերջին անգամ լրագրիներում յայտարարեց, որ ինքն պատրաստում է մի այդպիսի ծրագիր. այդ հարցին պատասխանը դրական կերպով խնդրվե-ցաւ պ. Մանդինեանից, որը ճանաչողական վար-չութեան անդամներից մէկն է: Բայց Մանդինեան-ցը դժուարացաւ մի դրական պատասխան տալ այդ հարցի և միայն առաջարկեց ժողովին՝ կազ-մել ծխական և միջնակարգ դպրոցների ծրագրերը: Ժողովի ուսուցիչներից մէկը յայտնեց, թէ ճանաչ-վարչութեան կազմած ծրագիրը երբեք պարտա-դիր չէ կարող համարվել մեր դպրոցների համար և չէ լուրձ ներկայ ուսուցչական ժողովից իրա-ւունքը կազմել մի այդպիսի ծրագիր, քանի որ վճարաւոր կոնդակով, որ կարգաւորվեցաւ ժողովի բացման ժամանակը, ընդհանուր ուսուցչական ժո-ղովին պատուիրվում է կազմել ի միջի այլոց ծը-խական և միջնակարգ դպրոցների ծրագրերը: Կոնդակի այս խօսքերը մեզ կատարեալ իրաւունք են տալիս յուսալ, որ ընդհանուր ուսուցչական ժողովի կազմած ծրագիրները անպատճառ վաւե-րացում կը ստանան վճարաւորից: Այնուհետեւ առաջարկվեցաւ, որ նախագահը շտապէ խնդրել գտնել ճեմ. վարչութեան կազմած ծրագիրները, որը կարող է մասնախմբին պիտանի և օժանդա-կող լինել ծրագիրներ կազմելիս, ի նկատի ունե-լով որ ճեմ. վարչութեան անդամները մարտաբոս-ներ և համալսարանականներ են: Այս առաջար-կութիւնը ընդունվեցաւ: Նոյն օրը երկուսեան ընտրվեցաւ 35 հոգուց բաղկացած մի մասնա-խումբ:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻՑԻՑ

Կ. Պօլս, 9 օգոստոսի
Շքը սատակ է և սակայն Պօլսոյ հայը սքան-

չելի առաքելութեամբ կը վաղէ հեւ ի հեւ, արեւն բրտինք մտած, պատկել Պօլսոյ դպրոցներու իր դաւակաց տարեկան աշխատանքը: Կը կարգա-ցուին ու կը կարգացուին ճառեր, ծախարարու-թիւն մը: Կանցնին յուլիս, օգոստոս ամիսներն, այնուհետեւ երթաւ Բարով կրթական հարց: Աղ-թամար, Միս, պատրիարքական տաճարայ, անձ յուսատու աստղերն հայոց փրկութեան: Ազգ. ժողով, մամուլ աստեղ վրայ միայն պարտին խորհել: Մեր ազգային կրթական տնօրէնը կարող անձի համար ունի, մօտ երկու տարի է չարաչար կաշխատի: Բաւական է կարող ըլլալ և աշխա-տել: Պ. Մամիկոնեանի ըստած է «որչափ կրնաս զարգացուր Թիւրքիոյ հայոց կրթութիւնը, քեզ կատարեալ ապատու լինի, միայն թէ աղբը դրամ չը տայ:» Սա ևս պէտք է ըսել թէ Թիւրքիոյ անտեսադիտական համոզումները շատ կը շուա-րեցնեն զանոնք որը կըմտնեն թէ այլ կերպ պէտք է ըլլայ մեր կրթութիւնը:—Անցնալիքը պ. Մամիկոնեան ժողով մը գումարեց նպատակ ունենալով խորհել ազգային դատարարական վրայ, լաւ ծրագիր մը պատրաստել, ի գործ դնել: Ոչինչ արդիւնք: Հարկ է չարաչար աշխատել յայտնելու համար: Եւ ուր են այն օրերը յորա ամին աշխատանք շատ թեթեւ կերպից գործիչ-ներուն: Ազգային վերածնութեան աշխատելու համոզումը ոգի կուտար այդ երիտասարդներուն: Զարկին, ջախջիւղեցին աստեղ զուլմները:

Թիւրքիոյ անտեսադիտական համոզմանց վրայ ակնարկութիւն մը ըլլիք վրէ, քիչ մը բացատ-րենք: Գուր սովոր է, քիչ միշտ զմեզ գետնէ դեմին զարնել, բայց ոչ երբեք նեղութիւն յանձն կառ-նուր գիտնալու թէ միշտ մեղապարտ ենք: Թիւր-քիոյ հայոց այսքան սերունդներ յորադր կոտն, ու նորերն ալ պիտի ըլլան: Եւ ինչու: ՊԸ-խատը պատճառն Թիւրքիոյ անտեսական վիճակն է: Ենչև ողջ զաղափարներ անոնց որը կը կա-ռավարեն Թիւրքիան և տալ այս երկրին տնտե-սագիտական ուղղութիւն մը, դա մեր կարողու-թիւնէ վեր է: Ո՛չ ապաքն Թիւրքիոյ պետական անձինք խորը համոզում են թէ՛ այս երկրին նիւթական զարգացումը առաջ պիտի բերէ խա-ւամբն ստրկութիւնը:—Ի՞նչ կրթութիւն տանք մեր դաւակաց: Կրթէ՛ր զանկալ գերմանական ծը-րագրով, կրթէ՛ր զանկալ ֆրանսական եղանակաւ, մէթօնները չեն որ կը պակսին: Բայց կուզայ օր մը որ ունենք պատանիներու խումբ մը, տասն և եօթը տարեկան են: Ի՞նչ ասպարէզ ընտրես: Գաւառները խրկես, բայց գաւառին աչքը արդէն Պօլսոյ վրայ է: Վաճառականութիւնը ընտրես, բայց վաճառականութիւնը վաղուց է թողախտ բռնուած է: Մեքենադրութիւն հանձար ունի տղան, առ ինչ օգուտ: Չմեք տեսներ երիտասարդներ որը ուսան, և լաւ ուսան, Եւրօպիոյ դպրոցներու մէջ երկրաշափութիւն: Խեղճ երիտասարդները պարսպ պարսպ կը թափանցեն: Փանինը գեղա-րուեստից համար ծնած են ու կը խամբեն: Հնար է որ ամին տղայ բիշիլ ու փաստագրան ըլլայ, զի ընթացիկ արուեստներն են:—Բայց հարկ է ամեն տարի հարկաւոր պատանիներու միջոց գտնել հաց ճարելու: Այդ պատանիները, անոնցմէ եր-ջանիկները, կըլլան ինչ որ կրնան, չէ թէ ինչ որ կրնային: Իսկ խեղճ, թշուառ մնացածները թիւք: Եւ թէ դուք հոս ըլլալիք ձեր սրտէն աչ արեւն չը պիտի երթար տեսնելով այդ երիտա-սարդութիւնը որ կը խամբի, կը թոռմի: Եւ ինչ երիտասարդութիւն: Մենք կը կարծենք թէ չը կայ տեղ մը, նոյն իսկ Շուշի, որ առաջ բերէ ընկանէն ընդունակ այնքան տղաներ, որչափ Պօլս: Մտիւր հոս ու է դպրոց. տես աշակերտ-ները, ամէնուն ղէպքին վրայ շնորհք մը կայ, ե-րեսուն վրայ կը փայլի ընդունակութիւնը: Խիտ սակաւաթիւ են անընդունակ ծնած պոլսեցի տը-ղաներ: Պօլսեցի հայ տղան յաղթանակ տարած է ամեն օտար դպրոցներու մէջ: Թերես անհիմն չըլլայ այն կարծիքը թէ՛ պոլսեցուց ամուսնու-թեան կերպը շատ նպաստած է ուշիմ տղայներ ծնելու: Շատ տարբեր գաւառի արեւներ են որը Պօլս կը խառնուին իրար: Այնեցին կատար-ցին հետ, վանեցին պոլսեցուց հետ, մշեցին կի-րիկացիին հետ կը միանայ: Այս կետերն ուսում-նասիրել բիշիլներուն անկ է: Բայց անոնցմէ ալ քիչ մը գրել կըրդնենք պատաւի դեր կատարելը կը սիրեն: Աւելի օգտակար չէ՛ քսութիւն ընել, ցած բամբասանքներ խօսել քան այսպիսի հար-ցերով զրաղիլ:

Մենք գտնեք քիչ մ'ալ պարզաբանալութեանց հանդէսներու, և հարեանցիկ նկարագրութեամբք

ՕՐԻՍՍՍ, 21. օգոստոսի: «Զինաջուկ» շոգեհեռավոր պատեղ Հասան «Մօսկվա» շոգեհեռավոր ծառայողները և ճանապարհորդները: Կորած շոգեհեռավոր յուրիսի 7-ին Գաբուրի մօտ գրպաւ աւազի կիտուածին: Տրիւմֆերի մէջ ջուր երևաց: Աւազը և մառախուղը շոգեհեռավոր դեպի ամիս էին քշում: Սկսեցին նաւախնդրել ճանապարհորդներին և պաշարի մի մասը ափ անց կացնել: Յայտնվեցան փայրները, որոնցից մեծ դժուարութեամբ պաշտպանեցին ճանապարհորդներին և պաշարների մասը, ֆնացածը կորցրան: Միայն յուրիսի 3-ին կարելի եղաւ սամակ ուղարկել Ագեն, իսկ յուրիսի 27-ին Բրիտանական Հնդկական ինկերութեան

«Բաղդադ» նաև վրա նստելու Ազեն հասան յուրիս 30-ին: Այնպեղից նրանց վերցրեց «Զարիկա» նաև, որ օգոստոսի 14-ին Պորտ-Սայդի մէջ յանձնեց նրանց «Զիւս- չով» շոգենաւին: «Годосъ» հաղորդում է, որ երէկ Մոսկվայի մէջ բացվեցաւ ձիաների աշխարհանդէսը: «Новое Время» լրագի- րը հաղորդում է, որ հին Բուսայի մէջ այրվեցաւ թատրոնը, մարդկանց հետ զըժ- բաղդուլներն չէ պատահել: Ս. Պետերբուր- գի մէջ 1883 թուականի մայիսին եղեմա- ղրված է բուսարանների և այգեպանների ժողով և այգեբանութեան միջազգային աշ- խարհանդէսը: «Պետր Վելիկի» նաւով օգոս- տոսի 15-ին հասաւ Եւրոպայի Միկուլա- Մակայ: Նա հիւանդ է:

ԴՈՒՐԻՆ, 22 օգոստոսի: Ծառայութիւ- նից արձակված են քաղաքային պոլիցիայի 300 ծառայողներ ժողովին մասնակցելու համար, որ պոլիցիական իշխանութեան գործողութիւնները պահպանող վճիռ կա- յացրեց:

ԱՅԵՆԲ, 22 օգոստոսի: Պատերազմական կռիւները յոյն-թուրքական սահմանի վրա չեն դադարում, չը նայելով, որ կառավա- րութիւնները համաձայնվեցան վիճելի տե- ղը ժամանակակերպէս չէզոք համարել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 օգոստոսի: «Правит. Вѣстн.» լրագրի մէջ հրատարակված է, որ Պելիվ արտասահման գնալու համար արձակուրդ է ստացել երկու ամսով:

ԴՈՒՐԻՆ, 22 օգոստոսի: Տեղական պոլի- ցիայի բոլոր անդամները հրաժարվեցան ի- րանց պաշտօններից: Փոխարքան հրաւիրում է բնակիչներին, որ նրանք հօսկին կարգա- պահութեան վրա:

Իմբադիր—հրատարակող ԳԻՐԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Թիֆլիսի Հայ թատրոնական մշտական խումբը ի նշան իւր խորին համակրութեան դէպի Հայ ուսուցչական ժողովը, հինգշաբ- Թի, օգոստոսի 26-ին, կը տայ ներկայացումն հետեւեալ պիէսներէից:

«Ժօզէֆ, փարիզի շրջմիտի երեկայ», եր- կու արարուածով, Թարգմանութիւն Փրան- սիերէնից և «Բռնի Ամուսնութիւն», գործ Մօլլերի, Թարգմանութիւն Զիլկեանի: Տոմասները թէ վաղօրօք և թէ ներկա- յացման օրը ծախվում են Արծրունու Թատրոնի կասսայում:



12—50

ՊԱՏԻ ունեւ յայտնելու պատելի հա- սարակութեանը որ աւելի քան 50 տեսակ զանազան ընտիր ՊԱՏԻՐՈՒՄ ԹԱԲԵՐ առնել ջանկացողները (արկղիկը 55 կօպէկից մին- չէ 2 ր. 30 կօպ.) կարող են մեզ, Բոստօվ (Գօնի վրա) բաղաբը դիմել:

Ամեն տեսակ ՊԱՏԻՐՈՒՄՆԵՐ կուղարկվեն շատ շուտով և ֆարքիկայի գներով: Պա- տուէր անողները կարող են մինչև անգամ բուրդի 10% բէհ ուղարկել իսկ մնացած գումարը ապրանքը ստանալուն պէս վճարել:

ՊԵՏԻՎՈՒՄՆԵՐ ուղարկվում է ցանկա- ցողներին ձերապէս:

Մեր հասցէն РОСТОВЪ на Дону Мартироу Теръ-Асатурову:

3—3

ԼԵՕՆԻԴ ՖԵՕԴՈՐՈՎԻՉ ԿՆԻՆԱ հասաւ Ս. ՊԵՏԵՐ- ԲՈՒՐԳԻՑ Թիֆլիսի երաժշտական ու- սումնարանի հրաւերով և յայտնում է, որ բացի իր պարապմունքներից ուսումնարա- նի մէջ նա մասնաւոր ԴԱՍԵՐ կը տայ պիանոի վրա անհիւ համար թէ իր ՏԱ- ՆԸ և թէ տանից ԴՈՒՐԱ: Ընդունում է սկսող երեխաներին, նոյնպէս և ԲԱՐ- ՁՐԻ ԿՐԹՈՒԹԵԱՆ համար: Պայման- ների մասին կարելի է նրա հետ խօսել ա- մեն օր 1—3 ժամը Թիֆլիսի երաժշտական ուսումնարանի մէջ: ԳԻՐԲՈՒԴՈՎԱ- ԿԱՅԱ փողոց (նախկին Կամենդատկայա) տուն ՏԵՐ-ՂՈՒԿԱՍՕՎ Ի № 6:

(Ե. հ. շ.) 4—12

Въ Редакціи газеты

«МШАКЪ»

Продается

БРОШЮРА

„ЭКОНОМИЧЕСКОЕ ПОЛОЖЕНИЕ ТУРЕЦКИХЪ АРМІЙНЪ.“

Д. Григорія АРЦРУНИ.

Брошюра напечатана въ Москвѣ.

Цѣна 25 коп.

ԻՐԱՒԱՐԱՆԱԿԱՆ ԳՐԱՍԵ- ՆԵԱԿ, Գօյովինսկի պրօպագանդի վրա, տուն ճարտարապետ Բելի: Գրասենեակը բաց է առաւօտեան 9 ժամից մինչև 3 ժամը կէս օրից յետոյ և երեկոյան 7— 10 ժամը ամենայն օր, բացի կիրակի օր- րէից և մեծ տօներէից:

ԹԻՑ առաջին հունձի այս տարի չա- փազանց զոյնաւոր և հոտաւէտ: Այդ թէյից ԱՆԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ մէջ ստացված է 50,000 ֆունտ և ծախվում է 25% էժան և աւելի լաւ քան թէ ուրիշ տեղը օրինակ. Լաւ 40Ն.90 թէյ 1 ր.—1 ր. 20 կօպ., պատուական ՍԱՆՅԱ թէյ 1 ր. 40 կ., հիանալի ՄՈՆԻԱ թէյ 1 ր. 60 կ. այս թէյ ամեն տեղ ծախվում է 2 ր.—2 ր. 50 կ., գեղեցիկ ԿԱՅԱՍՈՒ թէյ 1 ր. 80 կ. և ամենալաւ ֆուլ-չու-ֆու թէյ 2 ր. մա- ջուր թէյ առանց թղթի: Նոյն տեղը սովորաբար լինում են 500 երկված ՄԱՀԱԿԱՆ- ՆԵՐ 6 ր.—60 ր., երկված ԳՐԻՉԵՐ ամ- բողջ Անդրովկասի համար, շօկօլադ ֆրայ, Շելլիլի ԴԱՆԱԿՆԵՐ, վերականգնող ՄԱԿ- ՄԱՍՏԵՐ մազերի համար, հրացաններ ԴԱՌԻ, ԲԵՎՈՎԵՐՆԵՐ ՎԵՐԻ, ԹԱՄԲԵՐ Բարնբերի, Կոյմանի նըշըշտայ, ԱԲՈՄԵՐ Շփարցի կէս գնով: ԱՆԳԼԻՍԿԱՆ ԽԱՆՈՒԹԻ, ԹԻՑԼԻՍԻ ՄԵՋ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՅՈՒՄ № 156, 157, 158, 159 և 100:

29—100

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՁԱ- ԿԱՆ ԺՈՂՈՎԻ նախապատրաստու- Թիւնները հոգացող կարգադրիչ Յանձնա- ժողովը խնդրում է այն պարոններին, որոնք որ և է ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ ցանկա- նում են ստանալ ՅԱՆՁՆԱԺՈՂՈ- ՎԻՑ կամ հաղորդել նորան, որ բարեհա- ձեն ՇՆՈՐՀ ԲԵՐԵԼ նրա ԳՐԱ- ՍԵՆԵԱԿԸ ԱՐԾՐՈՒՆՈՒ ԳԱ- ԼԵՐԷԻ ՄԵՋ № 170: Գրասենեակը բաց է ԱՄԵՆ ՕՐ առաւօտեան 9 ժա- մից մինչև 11 ժամը:

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՈՒՑՁԱ- ԿԱՆ ԺՈՂՈՎԻ նախապատրաստու- ՏՈՄՍՍԿ ցանկացողները կարող են ստանալ Ուսուցչական ժողովի ԳՐԱՍԵ- ՆԵԱԿՈՒՄ, որ գտնվում է ԱՐԾ- ԲՈՒՆՈՒ ԳԱԼԼԵՐԷՅՈՒՄ № 170: Գրասենեակը բաց է 2 րուր է:

Լայս տեսան «ՎԱՐԺԱՐԱՆԻ» ա- առջին և երկրորդ համարները: Ստորա- ջանկացողները կարող են Վ. Շահբերդեանի լրա- ղրական գործակալութեան խանութում և պ. Կատարեանի Կէպոյում: Տարեկան գինն է ՀԻՆԳ րուրի:

ԲԱԳՐԱՏ ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ

Ո Ւ Ս Ո Ւ Մ Ն Ա Ր Ա Ն

ՊՐՈԳՐԱՄԱԶԻՄԱԿԱՆ ԿՈՒՐՍՈՎ

(Վէլիամինսկան փողոց, իշխան Ամատունու տանը)

Բացվում են I և II պրոգրիմագիական դասարանը պանսիօնով: Ընդունելութիւնը և քննութիւնները կը սկսվեն օգոստոսի 20-ից, իսկ ուսմունքը սկսվում էր մէկից: Գա- սատունութեան համար հրաւիրված են բացառապէս ԳԻՄՆԱԶԻՆՈՒ ՈՒ- ՍՈՒՑԻՉՆԵՐ:

5—8

Պատու ունեւ յայտնել Թիֆլիսի եւ ՆՈՐԱ ՉՈՐԱ ՎԻՃԱԿՆԵՐԻ ԲՈՒՐ ԵՐԵՑՓՈՒՄՆԵՐԻՆ ԵՒ ՔԱՀԱՆԱՆԵՐԻՆ որ համաձայն դաշնագրի ներկայ թուի ԵՐԵՑՓՈՒՄ 15-ԻՑ ՎԵՐՋՍՅԱԼ մամուլաձուլութեան ՆԱԽԿԻՆ կապալա- ռուի պայմանագրով և այսուհետեւ ՊԵՏԵՐ ԵՒ ԴԻՄԵԼ ԽՄ ԽԱՆՈՒԹԸ մամ գներու համար, որպէս նոր կապալառու: Առետուրի խանութը իւր նախկին տեղն է: Կապալառու թուփռութեանց:

2—3

ՕԳՈՍՏՈՍ ԱՄՍԻ ՄԵԿԻՑ

ՍԿՍԵՑ ՀՐԱՏԱՐԱՎԿԵԼ ՎԻԷՆԱՅՈՒՄ

L'ORIENTAL

ՖՐԱՆՍԵՐԷՆ ԹԵՐԹԸ, ԱՄԻՍԸ ԵՐԿՈՒ ԱՆԳԱՄ:

«Ժուրնալ դ'Օրիան» լրագրի հին բաժանորդներն դադարեցրած թերթի տեղ կուղարկվի այդ նոր հրատարակութիւնը:

«L'Oriental» թերթի տարեկան գինը 8 րուր է, կէս տարվանը 4 րուր:

Գրվել կարելի է «ՄԵՍԿԻ» խմբագրութեան մէջ, կամ ուղղակի Վիէնայում գիմե- լով հետեւալ հասցեակ հասցէով: Vienne (Autriche) M. F. Salles I. Neuer Markt 9.

Մ Ի Ջ Ի փողոց, Կաթօլիչեւսկայա փողոցի անկիւնն № 13.

Աւելի էժան, քան թէ ուրիշ տեղ ծախվում են. ՎԻԷՆԱՅԻ ՄԵԿԵԼ ամե- նայն տեսակ, ֆրանսիական և անգլիական երկված կրկնված 8—30 ր., չա- մաղաններ 250—25 ր., սակվածներ 1. 30—12 ր., սուսն դուկն եր ձա- նապարհի 6—35 ր., մարաններ (погребы) 6—25 ր., սաւմօ վարն եր 60 կ.—1.25 ֆունտը, կուսման պիւնէ ամաններ, գերանիայի երկված էմալով ամաններ. ումի վալնի կն եր մրաւօ րնի 38 ր.—75 ր., հրացաններ երկու լույսնի 6—32 ր., ռէփօլվէրն եր ամենայն տեսակ 3. 50—30 ր., պատրաններ (դուլաններ) ռէփօլվէրի, սիկար Ուէնպարի ֆարքիլից. պապի- ռուս և թամբաբու կուշնարօլի գրիլի պապիլիօլի. 5,000 ՖՈՒՆՏ ԹԵՑ (չայ) եր, ՊԱՊԱՎԼԵՐԻ, բիւկիլիօ. (սուսնը չայու և կաֆէի) Լիւնէմի. կօֆէ Լիւնէմի և Միլէլիսօնի. Պետերբուրգում 40—1 ր. 25 կ. հայիլիներ ամենայն տեսակ 28 կ.—240 ր., պրօրկայ գրիլի քանաններ, հանքային և դարեւրի (для зельтерскихъ водъ и пива) դուլիլի (пучки), պապիլիներ սամվարի և չայու, դանակ չանդղ գանազան ֆարքիլիներ 1 ր. 20 կ.—25 ր. դուլիլի, գրաւորթներ 1 ր. 80 կ.—5—60 կ. դանակ ջրիլ 1—60 կ.—12 ր., դա- նակ հացի 20 կ.—1 ր., հատը, կուսման 1—40 մին: և 3—20 կ. պրիբօր. միս կարելու մաշիկայ. Անգլիական ութներ, բրիտանիկ չայիլիներ, կաֆէի- նիլներ ամենայն տեսակ, ջաղացներ կաֆէի համար, ֆիլտեր—Չուր մաքրելու, կրակմալ կարօրէն 18 կ., վաքս ֆրանսիայի ժակոյ, թուղթ փռտի, կանգիւրտ- ներ, սուրբուշ, մատիկ, գրիլ երկված, գրաւորթ, քարեմատակ, Թանաք, թանաքամաններ, պրեսպապիլիներ, գրաւորթ սեղանի և չայու ֆրաժէ, վարչակի և բրիտանիկ դուլիլի 1—50 կ. մինչև 12 ր., և չայու 45 կ.—5 ր., չու- միլէթ 45 կ.—5 ր., շամաղաններ ամեն տեսակ 25 կ.—12 ր. ջուխտ, պր- սապլիկաններ վարչակու, Ուէնիլի ԿԱԼՕՇԵՐԻ, ամեն տեսակ, գուլրաններ կա- նանց և մարդկերանց 15 կ.—50 կ. ջուխտ, շապիլիներ, մարդկերանց գալուս- տիլներ, գնտիլներ 35 կ.—4—50 կ., հատ, սնձերի և չոքի. սանդրի շի- ռմայու ոսկորէ, գուտապիլի և փայտէ, շոտկանի գրիլի, շոլի, սապիլի, պրի և կարտի համար. չուլիլի (бумага) մատիկ կօժի և շալի (парусы) ֆէ- շառիլէք մարդկերանց և կանանց, պրոմաններ, քիւսաներ, պապիլիս ամաններ և մանր գոլաններէնիլ ապրանքներ, սապիլ ամեն տեսակ 3 կ.—30 կ., կտոր, հոտաղէտ ջրեր, պուլիս, Կիլիկիլի ջրի քացախ, հոտաղէտ պարաշոկներ ԿԻԼԵՐԻ ԼԱՐՈՐԱՏՈՐԻՑ. և այլն և այլն և այլն:

Վաճառականներին առանձին պայմաններով և զիջումով վերցիլեալ ապ- րանքներ մեծ քանակութեամբ մշտապէս գտնվում են ՄԻԿԵԼԻ ՏԵՐ ՆԻԿՈՂՈ- ՍԵՆԱՅԻ պահեստում (въ складѣ) միջի փողոցում կաթիլիկաց փողոցի ան- կիւնում № 13.

Օտարաբաղադրեցի կարող են գիմել հետեւալ հասցէով. Тифлисѣ Ми- хаилу Н. Теръ-Никогосову.

120—180

Մ Ի Ջ Ի փողոց, Կաթօլիչեւսկայա փողոցի անկիւնն № 13.